Հայաստանի Հանրապետության
վիճակագրական կոմիտեի նախագահ
պարոն Ս. Մնացականյանին

ՀՀ քաղաքացի Մուշեղ Հովսեփյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պրն Մնացականյան,

Համաձայն 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

1. Նախատեսվո՞ւմ է 2020 թվականին սեպտեմբերի 27-ից սանձազերված պատերազմի՝ երկրի տնտեսական, ժողովրդագրական և սոցիալական իրավիճակի վրա ունեցած ազդեցության դիտարկման համար վիճակագրական ծրագրի կազմում:
2. ՀՀ վիճակագրական կոմիտեն 2020 թ. սեպտեմբերի 27-ից հետո ձեռնարկե՞լ է գործողություններ՝ ուղղված պատերազմի հետևանքով տնտեսական ու հասարակական գործընթացների վերաբերյալ վիճակագրության միասնական մեթոդաբանության ապահովմանը: Մասնավորապես՝ մշակվե՞լ են վիճակագրական փաստաթղթերի ձևեր, անցկացվե՞լ են խորհրդակցություններ վիճակագրություն արտադրողների հետ:
3. 2020 թ. սեպտեմբերի 27-ից հետո Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի անդամների կողմից ստացվե՞լ են առաջարկներ վիճակագրական ծրագրերում պատերազմի ազդեցությունների վերաբերյալ տեղեկությունների արտացոլման վերաբերյալ:
4. Պատերազմի վերսկսումից հետո իրականացվե՞լ է պաշտոնական վիճակագրություն օգտագործողների պահանջարկի ուսումնասիրություն:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ՝

Մուշեղ Հովսեփյան

15.11.2020